# Սերգեյ Դովլաթով

## Մերոնք

3

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Սկզբում Մառա մորաքույրս առաքման բաժնի տեսուչ էր: Այնուհետև՝ ավելի բարձր որակավորում պահանջող տպագրական աշխատող, եթե չեմ սխալվում՝ լինոտիպիստ: Էլի որոշ ժամանակ անց՝ սրբագրիչ: Դրանից հետո արդեն՝ խմբագրության քարտուղար: Եվ ամբողջ կյանքում խմբագրել է ուրիշների գրքերը:

Մորաքույրս խմբագրել է բազմաթիվ հիանալի գրողների: Օրինակ, Տինյանովին, Զոշչենկոյին, Ֆորշին...

Դատելով ընծայագրերից, Զոշչենկոն լավ էր վերաբերվում նրան: Անընդհատ շնորհակալություն է հայտնում համատեղ աշխատանքի համար...

Մորաքույրս առինքնող արտաքինով կին էր: Նրա հայկական, կրքալի գեղեցկության մեջ կեղծ երանգներ կային: Ինչպես լեռնային բնապատկերում կամ Լերմոնտովի ռոմանտիկ բանաստեղծություններում:

Մորաքույրս սուր աչք ուներ ու սուր միտք: Գերազանց հիշողության տեր էր: Նրա պատմածներից շատ բան ընդմիշտ մնացել է հիշողությանս մեջ: Հիշում եմ, օրինակ, իր կյանքի հետևյալ դրվագը:

Մի անգամ փողոցում հանդիպում է Միխայիլ Զոշչենկոյին: Գրողի կյանքում արդեն ծանր ժամանակներ էին: Զոշչենկոն, շրջվելով, արագ հեռանում է:

Մորաքույրս հասնում է հետևից ու հարցնում.

— Ինչո՞ւ ինձ չեք բարևում:

Զոշչենկոն քմծիծաղում ու ասում է.

— Ներող եղեք: Բարեկամներիս օգնում եմ ինձ չբարևել...

Մորաքույրս խմբագրել է Յուրի Գերմանին, Կոռնիլովին, Մեյֆուլինային: Նույնիսկ Ալեքսեյ Տոլստոյին: Եվ յուրաքանչյուրի մասին որևէ զավեշտական պատմություն ուներ:

...Հանգստյան տանը Ֆորշը թերթել է բողոքի գիրքը: Հայտնաբերել է հետևյալ գրառումը. «Շիլայի մեջ շատ հաճախ լինում են ամենատարբեր անտառային միջատներ: Վերջին ընթրիքի ժամանակ կեղևակեր բզեզ գտա...»

— Ինչ եք կարծում, — հարցրել է Ֆորշը, — սա բողո՞ք է, թե՞ գովասանք:

Բորիս Կոռնիլովի մասին էլ է ծիծաղելի դեպք պատմել:

. . . Նիկոլայ Տրիխոնովը նյութեր էր հավաքում ժողովածուի համար: Մորաքույրս այդ հրատարակության քարտուղարն էր: Տրիխոնովը խնդրում է մորաքրոջս Կոռնիլովից վերցնել բանաստեղծությունները: Կոռնիլովը հրաժարվում է տալ դրանք:

— Թող սիկտիրը քաշի ձեր Տրիխոնովը, — հայտարարում է նա:

Մորաքույրս վերադառնում է ու ասում գլխավոր խմբագրին .

— Կոռնիլովը բանաստեղծությունները չի տալիս: Ասում է՝ թող ՍԱՆՁԵՐԸ քաշի ձեր Տրիխոնովը . . .

— Սիկտի՛րը, — նյարդայնացած ուղղում է Տրիխոնովը, — սիկտիրը քաշի: Մի՞թե այդքան դժվար է հիշել . . .

Ալեքսեյ Տոլստոյի մասին էլ ուշագրավ պատմություններ ուներ:

. . . Մի անգամ բարձրահասակ ու մարմնեղ Ալեքսեյ Տոլստոյը գնալիս է լինում խմբագրության միջանցքով: Դիմացից, ոտքերի տակ նայելով, վազելով գալիս է մորաքույրս: Ցածրահասակ ու վտիտ՝ նա ընթացքից թափով գլխով հարվածում է Տոլստոյի փորին:

— Այ քեզ բան, — հարվածի տեղը շփելով ասում է Տոլստոյը: — Բա որ այստեղ աչքս լիներ . . .

Մորաքույրս անթիվ զավեշտական պատմություններ գիտեր:

Հետագայում արդեն՝ ինքնուրույն, իմացա, որ Կոռնիլովին գնդակահարել էին:

Որ Զոշչենկոն փառաբանել է ճամբարային ստրկական աշխատանքը:

Որ Ալեքսեյ Տոլստոյը սրիկա էր ու երեսպաշտ:

Որ Օլգա Ֆորշը առաջարկում էր սկսել նոր թվարկություն՝ ոմն Զուղաշվիլու (Ստալինի) ծննդից ի վեր:

Որ Լեոնովը էվակուացիայում գորգեր էր վերավաճառում:

Որ Վերա Ինբերը պահանջում էր մահապատժի ենթարկել իր զարմիկին (Տրոցկուն):

Որ հետաքրքրասեր Պավլենկոն գնում էր նայելու, թե ինչպես են հարցաքննում Մանդելշտամին:

Որ Յուրի Օլեշան դավաճանել է իր ընկեր Շոստակովիչին . . .

Եւ այլն:

Մորաքույրս, մինչդեռ, հիշում էր միայն ծիծաղաշարժ պատմությունները: Ես նրան չեմ մեղադրում: Մեր հիշողությունը ընտրական է, ինչպես քվեատուփը:

Իմ կարծիքով, մորաքույրս լավ խմբագիր է եղել: Ինձ այդ մասին ասել են այն գրողները, ում գործերը նա խմբագրել է:

Թեև ես ամենևին չեմ հասկանում, թե ինչի է պետք խմբագիրը առհասարակ:

Եթե գրողը լավն է, խմբագրի կարիք, կարծես թե, չկա: Եթե վատն է, ապա խմբագիրն էլ չի փրկի: Կարծում եմ՝ պարզից էլ պարզ է:

Ես գիտեմ, թե ինչպես էր մորաքույրս աշխատում հեղինակների հետ: Երբեմն ներկա եմ եղել: Նա, օրինակ, ասում էր.

— Յուրա, այստեղ չորս անգամ հանդիպում է «սառած» բառը:

— Իրոք, — զարմանում էր Յուրի Գերմանը: — Չեմ էլ նկատել:

Այդուհանդերձ, ես կարծում եմ, որ գրողին խմբագիր պետք չէ: Անգամ լավ գրողին: Իսկ վատ գրողին՝ առավել ևս:

Հայտնի է, օրինակ, հետևյալ պատմական փաստը: Վեպերից մեկում Դոստոևսկին գրել էր. «Կլոր սեղանը ձվաձև էր...»:

Ինչ-որ մեկը կարդում է այդ ստեղծագործության ձեռագիրն ու ասում.

— Ֆյոդոր Միխայլովիչ, այստեղ սխալվել եք, ուղղել է պետք:

Դոստոևսկին մտածում է մի պահ ու ասում.

— Թողեք ինչպես որ կա...

Ինչո՞ւ Դոստոևսկին չի կամեցել ուղղել ակնհայտ վրիպակը: Ինչո՞ւ Ալեքսանդր Դյուման իր վեպը վերնագրել է «Երեք հրացանակիրները», չնայած նրանք չորսն են:

Հարյուրավոր նման օրինակներ կան:

Հավանաբար, սխալները, անճշտությունները սիրելի են գրողի համար: Նշանակում է նաև՝ ընթերցողի համար:

Ինչպե՞ս կարելի ուղղել, օրինակ Ռոզանովին՝ «Մենք նման բան չենք լացել...»:

Ես անգամ տառասխալները կուղղեի միայն հեղինակի գիտությամբ: Էլ չեմ խոսում կետադրության մասին: Կետադրությունը ամեն հեղինակ ինքնուրույն է ստեղծում:

Ես կարծում եմ, մորաքույրս լավ խմբագիր է եղել: Ավելի ճիշտ՝ լավ մարդ է եղել՝ բարյացկամ ու խելոք:

Անձամբ ինձ լավ խմբագիրներ չեն հանդիպել: Թեև նրանց մեջ շատ էին հրաշալի մարդիկ:

Լավ խնբագրի հանդիպել եմ միայն մեկ անգամ: Կարծեմ Լենֆիլմում էր: Դա ոմն Հելլա Ռումմոն էր: Էստոնուհի էր ու ռուսերեն շատ վատ էր խոսում: Լեզվի թույլ իմացությունը նրա ասածներին առանձնահատուկ հստակություն էր հաղորդում: Նա ասում էր.

— Սցենարը լավն է: Ուրեմն չեն ընդունի...

Վաթսունական թվականներին սկսեցի գրելու փորձեր անել: Գրածներս ցույց տվի մորաքրոջս: Պատմվածքներումս հարյուրավոր սխալներ գտավ: Ոճական, ուղղագրական, կետադրական:

Նա ասում էր .

— Այստեղ գրված է . « . . . լռության ու ցրտի միասնություն»: Ճշգրիտ չէ: Լռությունն ու ցուրտը տարակարգ երեւույթներ են: Հարկավոր է գրել . «Անտառում լուռ էր ու ցուրտ»: Առանց խուճուճացնելու . . .

— Ինչպե՞ս թե՝ անտառում, — զարմանում էի ես: — Գործողությունը տեղի է ունենում պատժախցում:

— Ինչ որ է, — ասում էր մորաքույրս . . .

Այն տարիներին նրան գրական միավորում էին վստահել: Այդտեղից բազմաթիվ լավ գրողներ են դուրս եկել: Օրինակ Գանսովսկին ու Պիկուլը:

Ի թիվս մյուսների, միավորում էր եկել նաեւ Իոսիֆ Բրոդսկին: Մորաքույրս նրան չէր ընդունել: Բանաստեղծությունների մասին ասում էր .

— Խելագարի բարբաջանք է:

(Իդեպ, Բրոդսկու պոեզիայում դա էլ կա):

Բրոդսկուն չընդունեցին: Փոխարենը ընդունեցին շատ ու շատ ուրիշների: Լենինգրադում շատ են բանաստեղծները: Միայն Նեկրասովները երեքն էին՝ Վլադիմիր, Գեորգի եւ Բորիս . . .

Մորաքույրս կուսակցության անդամ էր: Ես նրան չեմ մեղադրում: Արժանի ու ազնիվ բազմաթիվ մարդիկ են հայտնվել կոմունիստական կուսակցության շարքերում: Նրանք մեղավոր չեն: Պարզապես ուզում էին ավելի լավ ապրել: Ավելի բարձր պաշտոններ զբաղեցնել . . .

Մորաքույրս, իհարկե, խիստ անհանգստանում ու ցավում էր, երբ տանջում էին Ախմատովային եւ Զոշչենկոյին: Իսկ Պաստերնակին հետապնդելու օրերին հիվանդացավ: Նա ասում էր .

— Քաղաքականապես սխալ քայլ է դա: Մենք կորցնում ենք մեր հեղինակությունն Արեւմուտքում: Մասնակիորեն նահանջում ենք քսաներորդ համագումարի նվաճումներից . . .

Տարիների ընթացքում մորաքույրս լավ գրադարան էր հավաքել: Գրքերի մեծ մասը՝ ընծայագրերով: Հաճախ՝ ջերմ ու հուզիչ . . .

Վալենտին Պիկուլի պաճուճազարդ ընծայագիրը սկսվում էր հետեւյալ բառերով .

«Մեր հոգիների մանկաբարձին . . . »:

Ֆանտաստ Գանսովսկու ընծայագիրը հոչակում էր. «Մեծագործ տարիների ու տարածության միջով ձեռք եմ մեկնում...»:

Վերջերս պարզվեց, որ Գանսովսկին ստուկաչ էր: Մատնում էր ծանոթներին:

Պիկուլն էլ աչքի ընկավ: Դատի ժամանակ ասաց Կիրիլ Վլադիմիրովիչ Ուսպենսկան.

— Կիրիլ: Մենք քո լավն ենք ուզում, իսկ դու շարունակում ես ստել . . .

Ազատականության վերելքի այդ տարիներին Ուսպենսկուն հինգ տարի տվեցին:

Իսկ Պիկուլին՝ բնակարան Ռիգայում...

Ծերության տարիներին մորաքույրս շատ էր կարդում: Ընծայագրերով գրքերը չէր վերընթերցում: Նրա մահճակալի կողքին դրված էին Ախմատովայի, Պաստերնակի, Բարատինսկու հատորյակները...

Մորաքրոջս մահից հետո գրադարանն անմիջապես վաճառեցին: Եղբայրս ու իր կինը նախապես պոկել էին ընծայագրերով էջերը: Թե չէ անհարմար կլիներ...

Մահանալուց ոչ շատ առաջ մորաքույրս ինձ մի բանաստեղծություն կարդաց.

Կյանքիս կեսը անցել եմ արդեն,
Ու դեռ առջևում են՝ սարեր շուռ տալը,
Արտեր ցանելը, գործերը ամեն:
Կյանքիս մեծ մասը անցել եմ արդեն...

— Մի բանաստեղծուհի է գրել, — ժպտաց մորաքույրս:

Ես կարծում եմ, իր գրածն էր: Ոտանավորն, իհարկե, անհարթ է: Առաջին տողը բառացի մեջբերում է՝ Դանթեից:

Եվ այդուհանդերձ, այն հուզեց ինձ.

Կյանքիս կեսը անցել եմ արդեն,
Ու դեռ առջևում են՝ սարեր շուռ տալը...

Մորաքույրս սխալվում էր:

Կյանքն արդեն ավարտին էր մոտենում:

Սխալներն անհնար էր ուղղել...

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Մորաքրոջս ամուսնու՝ Արոնի կենսագրությունը լիովին արտացոլում է մեր պետության պատմությունը: Սկզբում նա գիմնազիստ էր: Հետո՝ հեղափոխական ուսանող: Հետո՝ կարճ ժամանակ՝ կարմիրբանակային: Հետո, որքան էլ անհավանական է՝ սպիտակգվարդիական: Հետո՝ կրկին կարմիրբանակային՝ արդեն ավելի գիտակից:

Քաղաքացիական պատերազմի ավարտից հետո մորքրայր Արոնը ընդունվում է բանֆակ: Հետո դառնում է նէպման ու, եթե չեմ սխալվում՝ ժամանակավորապես հարստանում: Հետո՝ պայքարում է կուլակների դեմ: Հետո՝ զտում կուսակցության շարքերը: Հետո՝ արդեն իրեն են զտում: Այն բանի համար, որ ժամանակին նէպման է եղել . . .

Ժողովում մորքրայրս ելույթ է ունենում: Ասում է .

— Եթե ինձ հեռացնեք, ստիպված եմ լինելու այդ մասին պատմել կնոջս: Դա անասելի վեճուկռվով է հղի: Մի խոսքով, ձեր որոշելիքն է . . .

Ընկերները մտածեցին ու որոշեցին .

«Հեռացնե՛լ»:

Ավելի ուշ, ճիշտ է, վերականգնեցին: Ավելին՝ մորքրայր Արոնը այդպես էլ չնստեց:

Նա դարձավ վարչական աշխատող: Միշտ ինչ-որ բանի տնօրեն էր: Կամ որեւէ գծով փոխտնօրեն . . .

Ստալինին մորքրայրս պաշտում էր: Ինչպես չարաճճի որդուն են պաշտում: Տեսնելով թերությունները:

Գեներալիսիմուսի ճառերով ձայնասկավառակները պահվում էին կարմիր ալբոմներում: Այդպիսի ալբոմներ կային՝ քուղերով ու առաջնորդի ռելիեֆային դիմանկարով . . .

Երբ պարզվեց, որ Ստալինը բանդիտ է, մորքրայրս անկեղծորեն վշտացավ:

Հետո սիրեց Մալենկովին: Ասում էր, որ Մալենկովը ինժեներ է:

Երբ Մալենկովին հանեցին, նա սիրեց Բուլգանինին: Բուլգանինը նախահեղափոխական գավառական ոստիկանապետի արտաքին ուներ: Իսկ մորքրայրս ծագումով հենց գավառից էր՝ Նովոռոսիյսկից: Չի բացառվում, որ անկեղծորեն սիրում էր իր մանկության կուռքերին հիշեցնող Բուլգանինին:

Հետո նա սիրեց Խրուշչովին: Իսկ երբ հանեցին Խրուշչովին մորքրայրս դադարեց սիրելուց: Նա հոգնել էր իր զգացմունքներն իզուր վատնելուց:

Նա որոշեց սիրել Լենինին: Լենինը վաղուց մեռել էր, ու նրան անհնար էր հանել:

Շոշափելիորեն վարկաբեկելն անգամ հեշտ չէր: Ուստին՝ խլել սերը...

Դրա հետ մեկտեղ մորքրայրս մի տեսակ քաղաքականապես այլասերվեց: Սիրեց Լենինին, բայց սիրեց նաև Սոլժենիցինին: Սախարովին նույնպես սիրեց: Հիմնականում ջրածնային ռումբը ստեղծելու համար: Եվ այն բանի համար, որ դրանից հետո հարբեցող չդարձավ, այլ սկսեց պայքարել հանուն ազատության:

Բրեժնևին մորքրայրս չէր սիրում: Բրեժնևին ժամանակավոր երևույթ էր համարում (ինչը չհաստատվեց)...

Կյանքի վերջին տարիներին գրեթե այլախոհ էր: Բայց՝ չափավոր այլախոհ: Վլասովին չէր ընդունում: Սոլժենիցինին հարգում էր ընտրողաբար...

Մորքրայրս Բրեժնևին անանուն գրություններ էր ուղարկում: Դրանք գրում էր խնայդրամարկղում՝ մանուշակագույն թանաքով: Նաև՝ ձախ ձեռքով ու տպագիր տառերով: Գրությունները հակիրճ էին: Օրինակ.

«Ո՛ւր ես տանում Ռուսաստանը, հրեշ»:

Եվ ստորագրություն.

«Գեներալ Սվիրիդով»:

Կամ.

«ԲԱՄ-ը կեղծիք է»:

Եվ ստորագրություն.

«Գեներալ Կոլյուժնի»:

Երբեմն գեղարվեստական միջոցների էր դիմում.

«Հոնքերդ թավ՝ արյան ծարավ»:

Եվ ստորագրություն.

« Գեներալ Նեչիպորենկո»...

Մորքրայրս ուզում էր վերադառնալ լենինիզմի ակունքներին: Իսկ ես չէի ուզում: Ու անվերջ վիճում էինք: Մեր բանավեճի մակարդակը բարձր չէր:

— Գերմանացի լրտես, — ասում էի Լենինի մասին:

— Սրբապիղծ հիմար,— արձագանքում էր մորքրայրս՝ արդեն իմ հասցեին:

Շոշափում էինք թեմաների բավական նեղ շրջանակ . Լինչի դատաստան, բարքերի անկում, վիետնամական էպոպեա . . .

Մորքրայրս սոսկալի բարկանում էր .

— Ֆաշի՛ստ, — գոռում էր երբեմն մորքրայրս . . .

Ու հանկարծ մորքրայրս մեռավ: Ավելի ճիշտ՝ ծանր հիվանդացավ: Ու որոշեց, որ իր մեռնելու ժամանակն է: 76 տարեկան էր:

— Կանչեք Սերյոժային, — խնդրել էր նա:

Անմիջապես գնացի: Մորքրայրս պառկած էր՝ նիհար ու գունաթ: Բոլորին խնդրեց հեռանալ սենյակից:

— Սերգեյ, — շատ ցածրաձայն ասաց մորքրայրս, — ես մեռնում եմ . . .

Չպատասխանեցի:

— Մահից չեմ վախենում, — շարունակեց մորքրայրս:

Դադար պահեց ու կրկին խոսեց .

— Ես ազնիվ մոլորության մեջ եմ եղել . . . Տանջալիորեն գիտակցել եմ սխալներս . . . Եվ ահա թե ինչի եմ հանգել՝ այն սրբությունները, որոնց ներքո ապրել եմ, կեղծ էին . . . Ես գաղափարական պարտություն կրեցի . . .

Ջուր ուզեց: Բաժակը մոտեցրի շուրթերին:

— Սերգեյ, — շարունակեց մորքրայրս, — ես միշտ նախատել եմ քեզ: Նախատել եմ, որովհետեւ վախեցել եմ: Վախեցել եմ, որ քեզ կձերբակալեն: Դու չափազանց անզուսպ ես . . . Քեզ քննադատել եմ, բայց ներքուստ միշտ համամիտ եմ եղել: Դու ինձ պետք է հասկանաս: Քառասուն տարի այս . . . (մորքրայրս թունդ հայհոյեց) կուսակցության մեջ: Վաթսուն տարի այս . . . .

(մորքրայրս կրկնեց հայհոյանքը) պետության մեջ . . .

— Հանգստացիր, — ասացի:

— . . . նրանք ինձ պոռնիկ դարձրին:

Շունչ քաշեց ու շարունակեց .

— Դու միշտ ճիշտ ես եղել: Առարկում էի, որովհետեւ վախենում էի, որ քեզ կձերբակալեն: Ներիր . . .

Նա արտասվեց: Շատ խղճացի իրեն: Այդ պահին եկան բուժաշխատողներն ու մորքրայրիս տարան հիվանդանոց: Մորաքույրս կարծում էր, թե նրան կտանեն Սվերդլովի անվան հիվանդանոցը:

— Չէ՞ որ դու բոլշեւիկ ես, — ասում էր մորաքույրս:

— Ոչ, — առարկում էր մորքրայրս, — ես հին բոլշեւիկ չեմ:

— Ինչպե՞ս թե:

— Հին բոլշևիկը կոնկրետ հասկացություն է: Հին բոլշևիկը նա է, ով կուսակցության շարքերն է ընդունվել մինչև երեսունհինգ թվականը: Ես ավելի ուշ եմ ընդունվել:

Մորաքույրս չէր կարողանում հավատալ:

— Ուրեմն դու հին բոլշևիկ չե՞ս:

— Ոչ:

— Մեկ է, — ասում էր մորաքույրս, — գուցե քեզ էլ ինչ-որ բան հասնում է:

— Հնարավոր է, — համաձայնում էր մորքրայրս, — ինչ-որ բան կարող է և հասնում է: Օրինակ, խնձոր...

Մի խոսքով, մորքրայրիս տարան սովորական հիվանդանոց: Բուժող բժշկին մորքրայրս հարցնում է.

— Բժիշկ, դուք ճակատային զինվոր եղե՞լ եք:

— Այո, — պատասխանում է բժիշկը, — ես ճակատային եմ:

— Ես էլ եմ ճակատային, — ասում է մորքրայրս: — Ասացեք ինձ ազնվորեն, ինչպես ճակատայինը ճակատայինին, երկա՞ր կպառկեմ այստեղ:

— Բարենպաստ ընթացքի դեպքում՝ մեկ ամիս, պատասխանում է բժիշկը:

— Իսկ անբարենպաստի դեպքում, — քմծիծաղում է մորքրայրս, — շատ ավելի քի՞չ...

Հիվանդանոցում պառկեց երեք շաբաթ: Հետո նրան տուն բերեցին:

Անմիջապես գնացի մոտը:

Մորքրայրս տրտում էր ու խաղաղ: Ասես գերագույն իմաստնություն էր ձեռք բերել:

Բայց երբ խոսքի մեջ հիշատակեցի Չե Գևարային, զգաստացավ:

— Ավանտյուրիստ է ու գանգստեր, — ասացի ես:

— Իսկ դու պորտաբույծ ես ու տխմար, — արձագանքեց մորքրայրս: Ու շարունակեց ընդգծված ոգևորությամբ. — Կարո՞ղ ես բարեբեր մի գաղափար նշել, որ կոմունիզմի շրջանակներից դուրս գտնվի...

Չպատասխանեցի:

Դրանից հետո հաճախ էինք հանդիպում ու միշտ վիճում էինք: Մորքրայրս նզովում էր ռոք երաժշտությունը, արտասահման փախած Բարիշնիկովին ու գեներալ Անդրեյ Վլասովին: Ես՝ անվճար բժշկությունը, «Կարապի լիճն» ու Ֆելիքս Ձերժինսկուն:

Հետո մորքրայրս նորից հիվանդացավ:

— Կանչեք Սերյոժային:

Անմիջապես գնացի: Նիհարած էր ու գունատ: Մահճակալի կողքի աթոռին անթիվ սրվակներ էին դրված: Այնտեղ էին նաեւ ինտիմ-վարդագույն դնովի ատամները:

— Սերյոժա, — խուլ ձայնով ասաց մորքրայրս:

Ձեռքը շոյեցի:

— Մի մեծ խնդրանք ունեմ: Խոստացիր, որ կկատարես:

Գլխով արեցի:

— Խեղդիր ինձ, — խնդրեց մորքրայրս:

Շփոթված լռեցի: — Զզվել եմ ապրելուց: Այլեւս չեմ հավատում, որ հնարավոր է կոմունիզմը կառուցել առանձին վերցրած երկրում: Գլորվել-ընկել եմ տրոցկիզմի ճահիճը:

— Այդ մասին մի մտածիր, — ասացի:

— Դու պատրա՞ստ ես կատարել խնդրանքս . . . Տեսնում եմ, երկմտում ես . . . Կարող եմ, իհարկե, քսան հաբ քնաբեր ծամել: Ավաղ, դրանից ոչ միշտ են մահանում . . . Իսկ եթե կաթվածահա՞ր լինեմ: Ու ծանր բե՞ռ դառնամ բոլորիդ համար: Այդ պատճառով էլ քեզ եմ դիմում . . .

— Վերջ տուր, — ասացի, — վերջ տուր . . .

— Անչափ շնորհակալ կլինեմ, — ասաց մորքրայրս, — քեզ կկտակեմ Լենինի բոլոր հատորները: Որպես մակուլատուրա «Բուրատինո»-ի հետ կփոխես . . . Բայց նախ խեղդիր ինձ:

— Վերջ տուր, — ասացի:

— Մեր շուրջը համատարած չարություն է ու հիմարություն, — ասաց մորքրայրս, — ճշմարտություն չկա . . .

— Հանգստացիր:

— Գիտե՞ս ինչու եմ տանջվում, — շարունակեց նա: — Երբ ապրում էինք Նովոռոսիյսկում, այնտեղ մի ցանկապատ կար: Բարձր դարչնագույն ցանկապատ: Ամեն օր անցնում էի դրա կողքով: Ներսում ինչ կար, չգիտեմ: Չեմ հարցրել: Չէի կարծում, թե դա կարեւոր է . . . Ինչ անիմաստ ու հիմար ձեւով ապրեցի կյանքս: Ուրեմն հրաժարվո՞ւմ ես:

— Վերջ տուր, — ասացի:

Մորքրայրս շրջվեց դեպի պատն ու լռեց:

Երկու շաբաթ հետո առողջացավ: Ու կրկին թունդ վիճեցինք:

— Տխմա՛ր, — գոռում էր մորքրայրս: — Չես ուզում հասկանալ: Կոմունիզմի գաղափարը, թեև վարկաբեկված է ապաշնորհների կողմից, առաջվա պես հանճարեղ է: Զուր չէ, որ այն ընդունում են միլիոնավոր մարդիկ:

— Այդ ո՞վ է ընդունում, — ասում էի ես, — Ոչ մի առողջ դատող մարդ...

— Ուրեմն չե՞ն ընդունում, — կարմրատակում էր մորքրայրս: — Չեն ընդունում ու լռո՞ւմ են: Ուրեմն բոլորը երեսպա՞շտ են...

— Գաղափարախոսությունը ընդունելն ամենևին էլ պարտադիր չէ, — ասում էի: — Դրան կամ համաձայն են, կամ ոչ: Բանտի պես է՝ ուզես-չուզես, պիտի նստես...

— Տխմա՛ր, — գոռում էր մորքրայրս, — ֆարցովշչիկ...

Գլխավերևում Սոլժենիցինի դիմանկարն էր կախել: Երբ հյուրեր էր ունենում, հանում էր...

Այդպես կրկնվեց մի քանի անգամ: Մորքրայրս հիվանդանում էր, հետո առողջանում: Մենք կռվում էինք: Հետո հաշտվում: Տարիներ անցան: Նա շատ ծերացավ: Քայլել չէր կարողանում: Մորքրայրիս շատ էի կապված...

Ինչպես արդեն ասել եմ, մորքրայրիս կենսագրությունն արտացոլում է մեր պետության պատմությունը... Մեր սիրելի ու սոսկալի պետության...

Հետո մորքրայրս մահացավ: Ափսոս...

Իսկ ինձ հանգիստ չի տալիս բարձր դարչնագույն պարիսպը...